ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունվարի 18-ին տեղի ունեցավ Հռոմի պատերից դուրս գտնվող Սուրբ Պողոս Տաճարի դռան բացման արարողությունը՝ նախագահությամբ Հռոմի Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Սրբազան Պապի:

Հանդիպում Սուրբ Պողոս Տաճարում

Արարողությանը մասնակցելու համար Վատիկան էին ժամանել 22 Եկեղեցիների պատվիրակություններ, այդ թվում՝ Տիեզերական Պատրիարքության, Ալեքսանդրիայի, Երուսաղեմի, Ռուսաց, Սերբիայի, Ռումինիայի և մյուս Ուղղափառ Եկեղեցիների, Քենթրբերիի Արքեպիսկոպոսն անձամբ, Գերմանիայի Լութերական և այլ եվրոպական ու ամերիկյան բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Մայր Աթոռը ներկայացնում էր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերշ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Սուրբ Պողոս Տաճարի դռան բացումը մի էկումենիկ արարողություն էր, որ խորհրդանշում էր Քրիստոնյաների միությանը նվիրված մեկշաբաթյա աղոթքի սկիզբը:

«Այս Տաճարից ես իմ հայացքը զցում եմ դեպի նոր հազարամյակ, որտեղ տեսնում եմ մոտալուտ քրիստոնեական մի ապագա: Վերջապես սկսեցինք, որով կկարողանանք միասնաբար մեր քայլերն առաջ տանել որպես Քրիստոսի մեկ հոտ»,- այս խոսքերով Հռոմի գահակալը դիմեց քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին:

Արարողության ավարտին Սրբազան Քահանայապետը հյուրերի պատվին ճաշկերույթ տվեց: